ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

09 օգոստոսի 2024 թվականի թիվ 1-Ա

ք. Երևան

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կարիքների համար կազմակերպված 2024 թվականի օգոստոսի 6-ին «ՀՌՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում ***պարզվեց.***

1-ին չափաբաժնին հայտ ներկայացրած միակ մասնակիցը՝ «Ֆուդսիթի» ՍՊ ընկերությունը համաձայն վերոնշյալ ծածկագրով մրցույթի հրավերի հավելված 1-ի ներկայացրել է դիմում-հայտարարություն, որով հավաստում է, որ իր կողմից ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տվյալներ:

Սակայն, ըստ Հանձնաժողովի ուսումնասիրությունների և ՀՀ ֆինանսների նախարարության www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի տեղեկատվության, «Ֆուդսիթի» ՍՊ ընկերության հետ փոխկապակցված «Պետգնումներ» և «Սմարթլոջիսթիքս» ՍՊ ընկերությունները ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Մասնակցի ներկայացրած հայտի գնահատման արդյունքում ամրագրվում է հետևյալը.

Համաձայն ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը և ղեկավարվելով նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով պատվիրատուի ղեկավարը ***որոշեց՝***

«Ֆուդսիթի» ՍՊ ընկերության վերաբերյալ տեղեկատվությունը (համաձայն որոշման հավելվածի) ներկայացնել Լիազորված մարմնին մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

09 օգոստոսի 2024 թ.
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
գլխավոր քարտուղարի 2024 թվականի օգոստոսի 9-ի
թիվ 1-Ա որոշման

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Ֆուդսիթի» ՍՊԸ	01028873	ք. Երևան, Նոր Նորք, 0090, Գայի պ./Շ/11/20	խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը	-	-	09 օգոստոսի 2024 թ. «ՀՈՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/22»